Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում՝

1. **Ախուրյանի և Ամասիայի ՀՄՇՏԿ-ների շինարարությունների տեխնիկական հսկողության իրականացման**
2. **Եղեգնաձորի և Վայքի ՀՄՇՏԿ-ների շինարարությունների տեխնիկական հսկողության իրականացման**

առաջադրանքները իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերությունների ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է իրականացնել շինարարական աշխատանքներ՝ Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ ստեղծելու (վերանորոգելու կամ կառուցելու միջոցով), ինչպես նաև՝ ԱՍՀՆ-ի ենթակայության մի քանի գրասենյակներ վերանորոգելու նպատակով:

Նշված շինարարությունների որակի **տեխնիկական հսկողության իրականացման** (այսուհետ՝ տեխնիկական հսկողություն) համար նախատեսվում է ընտրել համապատասխան խորհրդատվական կազմակերպություն:

Ընտրված խորհրդատվական ընկերությունները պետք է իրականացնեն հետեւյալ առաջադրանքները՝

Խորհրդատվական կազմակերպության հիմնական գործունեությունը կայանալու է հետևյալում՝

ա) ուսումնասիրել շինարարական աշխատանքների (աշխատանքների) նախագծանախահաշվային փաստաթղթերը, և, մինչև դրանց հաստատումը, պատվիրատուին ներկայացնել իր կարծիքը,

բ) ապահովել սույն առաջադրանքի համար պայմանագրով նախատեսված իր մասնագետների ներկայությունը շինարարական օբյեկտներում՝ համաձայն Կապալառուների կողմից օբյեկտներում իրականացվող աշխատանքային ժամանակացույցի,

գ) ապահովել շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացումը՝ ՀՀ օրենսդրությանը, գործող նորմերին և Պատվիրատուի ներկայացրած պահանջներին համապատասխան:

Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա՝

- ✓ հասարակական շենքերի շինարարության տեխնիկական հսկողության իրականացման առնվազն 3 տարվա փորձ և առնվազն նույն ժամանակահատվածի փորձառություն ունեցող աշխատակազմի անդամներ,

- ✓ շինարարությունների որակի տեխնիկական հսկողության իրականացման համար անհրաժեշտ լիցենզիաները (հասարակական, էներգետիկ, կապի, տրանսպորտային, հիդրոտեխնիկական),
- ✓ հանձնարարվող յուրաքանչյուր շինարարական օբյեկտի հաշվարկով՝ իրավասություն ունեցող մեկ տեխնիկական հսկող,
- ✓ տեխնիկական հսկողության իրականացման առնվազն 3 հաջողությամբ ավարտված ծրագիր:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մեկ կամ ավել առաջադրանքների համար մինչեւ **սույն թվականի Հոկտեմբերի 02-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով և պարտադիր նշելով որ առաջադրանքի համար է Հետաքրքրվածության Հայտը (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am